



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.ysu.am

№ 176 «__12__»__11__2018 թ.

Արձանագրություն N 176

**ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի
2018թ-ի նոյեմբերի 12-ի նիստի**

Նիստին ներկա էին գիտխորհրդի 28 (քսանութ) անդամներից 19-ը:

Օրակարգ

1. Հեռակա ուսուցման ասպիրանտների ատեստավորման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Բարայեյան/:
2. Թեկնածուական ատենախոսության թեմաների և գիտական ղեկավարի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Բարայեյան/:
3. Գիտական աշխատությունների հրատարակության երաշխավորության հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Բարայեյան/:
4. Հանրային կառավարման ամբիոնի հենքի վրա Հանրային քաղաքականության ռեսուրսային (հետազոտական) կենտրոն (PPRC) ստեղծելու հարցը:
5. Դասախոսությունների նյութերը Intranet համակարգում մուտքագրման երաշխավորելու մասին հարցը:
6. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. Ատեստավորել հեռակա ուսուցման ասպիրանտուրայում սովորող հետևյալ ուսանողներին և երաշխավորել ուսուցման հաջորդ տարի փոխադրվելու համար.
ա/ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Սարիբեկյանին և Էդգար Էլբակյանին,
բ/ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի ասպիրանտներ՝ Խոսրովադուխտ Ազատյանին, Աննա Գալիկյանին, Նանե Վարդևանյանին, Արեն Առաքելյանին, Տաթևիկ Մինասյանին, Նարեկ Տիրատուրյանին, Անիկ Մարգարյանին, Արմենուհի Գևորգյանին,
գ/ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի ասպիրանտներ Սիրանուշ Մելիքյանին, Գոռ Պետրոսյանին, Արթուր Մահակյանին և Արփինե Ասատրյանին:
2. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները.

ա/ ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի ասպիրանտ Մ. Մարգարյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «**Գործադիր իշխանության գործառնման փոխակերպումը ՀՀ քաղաքական համակարգում**» ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեոյանին:

բ/ ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ Է. Չախոյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «**Վրաստան-ԱՄՆ հարաբերությունները 2003-2013թթ.**» Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել պ.գ.դ., պրոֆեսոր Գ. Պետրոսյանին:

3. Երաշխավորել հրատարակության՝

ա/ Բ.գ.դ. Վարդան Աթոյանի «**Ուղեղային կենտրոններ. Ռազմավարական գաղափարների դարբնոցները**» վերնագրով մենագրությունը:

բ/ ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս, բ.գ.թ. Ռ. Պետրոսյանի իսպաներենով «**Դիվանագիտական այցելություններ և զրույցներ**» վերնագրով ուսումնական ձեռնարկը:

գ/ ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս, բ.գ.թ. Ռ. Պետրոսյանի իսպաներենով «**Դիվանագիտական գրագրություն**» վերնագրով ուսումնական ձեռնարկը:

դ/ ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս, բ.գ.թ. Ռ. Պետրոսյանի իսպաներենով «**Դիվանագիտական արարողակարգ և վարվելակերպ**» վերնագրով ուսումնական ձեռնարկը:

4. Առաջարկել ԵՊՀ գիտական խորհրդին քննարկել հանրային կառավարման ամբիոնի շրջանակում Հանրային քաղաքականության ռեսուրսային (հետազոտական) կենտրոնի (PPRC) ստեղծման հարցը՝ հենվելով ամբիոնի մագիստրոսական կրթական «Հանրային (պետական) քաղաքականություն» ծրագրի աշխատանքային խմբի և դասախոսական կազմի ռեսուրսների վրա:

5. Երաշխավորել մուտքագրման Intranet համակարգում՝

ա/ ք.գ.թ. Ա. Գասպարյանի «**Ներքաղաքական գործընթացները Մերձավոր Արևելքի երկրներում**» դասընթացի դասախոսությունների նյութերը,

բ/ ք.գ.դ. դոցենտ Խ. Գալստյանի «**Քաղաքական բանակցություններ**» և «**Կոնֆլիկտների փոխակերպում**» դասընթացի դասախոսությունների նյութերը:

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Գ. Պետրոսյան

Գիտական խորհրդի քարտուղար, դոցենտ

Ա. Բարսեղյան

Իսկականի հետ ճիշտ է՝